ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունիսի 3-ին Ս. Էջմիածին եկաւ Անդրկովկասի Շէյխ ուլ Իսլամը Երևանի թուրք քաղաքացիների և խաների հետ ներողամտութիւն հայցելու Վեհափառ Հայրապետից՝ պատահած վայրագութեանց համար և միջոցների մասին խորհելու, որ ապագայում այդպիսի վայրագութիւնների կրկնուելու առաջն առնել կարողանան։ Ս. Էջմիածնում խմբագրուեց և բոլոր քաղաքներն ուղարկուեց հետևեալ շրջաբերական հեռագիրը.—

Մենք Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք և Կաթուղիկոս Մրկրտիչ և Կովկասեան մուսուլմանների Շէյխ ուլ Իսլամ՝ Կովկասի համայն հայ և մուսուլման ազգաբնակութեան յայտարարում ենք. ի նկատի ունենալով այն ազգակործան խռովութիւնը և կոտորածը, որ ընկել է երկու դարաւոր հարևան ազգերի մէջ և մօտ չորս ամիս քայքայում է նոցա անձնապէս, տնտեսապէս և բարոյապէս, և փոխադարձ անվստահութիւն, որ այժմ տիրում է ամենախիստ կերպով երկու ազգերի մէջ և աներևակայելի է, թէ երբ և ինչպէս կը վերջանայ, Մենք երկու Հովուապետներս այսօր Ս. Էջմիածնից ուղարկում ենք սոյն հեռագրական հրաւէրը և հրամանը Մեզ հաւատացեալ համայն հօտին. խրատելով, համոզելով և խնդրելով հայրաբար միանգամ ընդմիշտ վերջ տալ այդ կործանիչ և աննպատակ թշնամութեան, վերաբերուել սիրով և վստահութեամբ դէպ իրար այն գիտակցական և անկեղծ համոզմամբ, որ փետրվար ամսին Բագուայ եղբայրասպան աղէտից յետոյ եկեղեցիներում և մզկիթներում հանդիսաւորապէս ուխտեցին առ միմեանս մնալ սիրով, խաղաղութեամբ և վստահութեամբ, աշխատելով Մայր երկրի բարգաւաճման և երկու ազգերի բարօրութեան համար։ Թող Աստուած անխախտ պահէ մեր այս ուխտը. Թող Աւետարանը և Ղուրանը միջնորդ լինին խաղաղութեան և թող վերականգնի երկու հարևան ազգերի դարաւոր

հանգստութիւնը երկու խռովեալ արիւնարբու և այժմ կորստեան հասած ազգերի մէջ, տալով իւրաքանչիւրին երկնային խաղաղութիւն և եղբայրական սէր և համերաշխութիւն։

Ի վերայ խսկականին ստորագրեալ են

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.
ՇԷՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ Կովկասու.

15 յունիսի 1905 թ.
Ի Ս. Էջմիածին։

Նոյն ամսի 5-ին Վեհափառ Հայրապետի հրամանով փոխայցելութեան և խաղաղութիւնն ամրապնդելու համար Երևան ուղարկուեցին Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունին և Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը, որոնք Շէյխ ուլ Իսլամին տուած այցելութիւնից յետոյ՝ երեկոյեան ս. Լուսաւորիչ եկեղեցում քարոզով դիմեցին ժողովրդին և յորդոր կարդացին՝ բացի վայրագութեանց դէպքում ամեն կերպ պաշտպանուելուց, երբէք առիթ չըտալ թշնամութեան և արիւնհեղութեան և չըմոռանալ, որ խաղաղութիւնից և սիրուց աւելի մեծ զէնք չկայ մարդկանց կրքերն յաղթահարելու և դաղանացածներին դաղանութիւնից հանելու։

Իբրև պատասխան Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսի և Շէյխ ուլ Իսլամի հեռագրի Բագուից ստացուեցաւ հետևեալ պատասխանը.—

Ի ՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Խորին ուրախութեան և գոհունակութեան զգացմունքով ես հաղորդեցի Զերդ Վեհափառութեան հեռագրի բովանդակութիւնը մահմէդականներին։ Ամենքը համա-

կուած են նոյն զգացմունքներով և սրտանց ողջունում են երկու եղբայր ազգերի հոգևոր պետերի միութիւնը, որոնք հազարաւոր տարիներ ապրել են միաբան և եղբայրաբար։ Մահմեդականներն երբէք չեն մոռանալ այն սրբազան երդումն ու խոստումները, որ նրանք տուին անչափ յարգուած Շէյխ ուլ Իսլամի ներկայութեամբ և յոյս ունին, որ հայերն էլ այնքան հեղինակաւոր և սիրելի ղեկավար ունենալով ինչպէս Զերդ Սրբութիւնն է, հաւատարիմ կըմնան իրենց երդման և խոստումներին։

Թաղիեւ, նահանգական Ղազի միր
Քեարիմ միր Ջաֆար Զադէ։

Գանձակից ստացուեց նոյն առթիւ հետևեալ հեռագիրը։

Մեր քաղաքի մահմէդական և հայ ազգաբնակութիւնը խոհեմութեամբ ղեկավարուելով, աշխատում է պահպանել և հաստատուն պահել դարաւոր եղբայրական յարաբերութիւնը։ Ողորմութեամբ Ալլահի նրանք այնքան զգաստ են, որ հակառակ իրենց դրացիներիների, գիտեն ճանաչել լոյսը խաւարից։

Նահանգական Ղազի Փոլադզադէ։

Յունիսի 18-ին ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին Նորին Վեհափառութիւնը եպիսկոպոս ձեռնադրեց Նահապետ և Աշոտ վարդապետներին։ Նահապետ վարդապետն աւարտել է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկո-մատէմատիքական բաժինը, երկար ժամանակ ուսուցիչ և տեսուչ է եղել Ներսիսեան հոգևոր, Գայանեան օրիորդաց և Գէորգեան ճեմարանում։ Վարդապետ ժամանակ եղել է փոխանորդ Կարսի, դիւանապետ Վեհափառ Կաթուղիկոսի և վանահայր Ղրիմու սուրբ Խաչ վանքի, որտեղ ապրում էր 1900 թուից, 1897-ից իրաւունք չունենալով Կովկաս վերա-

դառնալու, մինչև որ աղատուեց այդ արդելքից բարձրագոյն հրամանաւ։ Աչոտ վարդապետը եղել է վանահայր Մողնու ս. Գէորգայ վանուց. Փոխանորդ Ալէքսանդրապոլի, տեսուչ տպարանի և մօտ 10 տարի անդամ Սինոդի։ Նա եպիսկոպոս ձեռնադրուեց Շուշուայ թեմի համար, որի վրայ հաստատուած է առաջնորդ։

Նախիջևան ուղարկուեց Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը կատարուելիք քննութեանց մասնակցելու և աշխատելու, որ ժողովրդին վերադարձնուի թալանած գոյքը։

Շարուր Դարալագեազի կողոպտուած գիւղերի սովի դատապարտուած բնակիչներին ալիւր բաժանելու համար Բաշ Նորաշէն ուղարկուեց տ. Ուխտանէս վարդապետը։

Վեհափառ հայրապետի հրամանով լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսը վարդապետական մասնաւոր իշխանութիւն տուաւ Լևոն, Բառնաբաս, Ուխտանէս և Երուանդ և Տաճատ աբեղաներին։